ԱՐԱԲԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՏԻՆ (ՍՈՒՂՈՒՐ)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Մոտավորապես երեք հարյուրամյակ (VII—X դդ.) արաբական խալիֆայության և բյուզանդական կայսրության միջև տեղի ունեցան երկարատև պատերազմներ, որոնց հիմնական թատերաբեմը հանդիսանում էին երկու կողմի սահմանամերձ շրջանները[1]։ Ընդ որում խալիֆայության կողմից սահմանային ամրությունները կազմում էին առանձին միավոր, հատուկ վարչական կազմակերպությամբ և անունով՝ Սուղուր։ Այս սահմանային ամրությունների գոտին ընդգրկում էր Մեծ Հայքի Բարձր Հայք և Չորրորդ Հայք (Ծուփք) նահանգների որոշ արևմտյան գավառները, Փոքր Հայքի հարավային կեսը, Եփրատացիքը և Կիլիկիան ամբողջովին[2]։

Սահմանային ամրությունների գոտին արաբները նվաճեցին Բյուզանդիայից Ասորիքն ու Վերին Միջագետքը գրավելուց հետո։ Յարմուքի ճակատամարտից (636) հետո արաբները հետապնդեցին նահանջող հույներին մինչև հյուսիսային Սիրիա։ 638-ին նվաճեցին Անտիոքը և արաբները կանգ առան Ամանոս (Սև լեռ) լեռնաշղթայի առջև, դեռ չկարողանալով մտնել Կիլիկիա։ Արաբ պատմիչ Բալազորու վկայությամբ[3] Օմար (634—644) և Օսման (644—656) խալիֆաների օրոք սահմանային ամրություններ (սուղուր) հասկացությունն ընդգրկում էր Անտիոքն իր շրջակայքով։

Այդ ժամանակ Կիլիկիան լքված երկիր էր, քանի որ Հերակլ կայսրը նահանջելիս իր հետ տարել էր տեղական բնակչությունը, որպեսզի անմարդաբնակ գոտի ստեղծի Բյուզանդիայի ու խալիֆայության միջև, թեև այդ բերդերում հաճախ լինում էին բյուզանդական կայազորներ։ Համենայն դեպս արաբները Ամանոս (արաբ. Լուքքամ) լեռների վրա ապրող մարդատների (ջուրաջիմա) հետ պայմանագիր էին կնքել, ըստ որի այդ ռազմունակ ցեղերը պետք է աջակցեին արաբներին՝ պաշտպանելու Ամանոսի Բաղրաս կոչված լեռնանցքը[4]։

---

[1] Խալիֆայությունը սահմանային ամրությունների գոտիներ ուներ նաև Դարբանդում, Միջին Ասիայում, Նուբիայում, Հյուսիսային Աֆրիկայում ու Իսպանիայում, սակայն հատկապես հայտնի էր Փոքր Ասիայի սահմանային ամրությունների գոտին։

[2] Արաբաբյուզանդական պատերազմների ու սահմանային ամրությունների գոտու պատմությանը նվիրված են Ա. Վասիլևի, Է. Հոնիգմանի ու Մ. Կանարի լուրջ մենագրությունները, որոնք, սակայն, վերաբերում են IX—X դդ. պատմությանը, իսկ VII—VIII դդ. դեռ կարոտ են ուսումնասիրման։ V. Vasiliev, Byzance et les Arabes, t. I, II, II 2. Bruxelles 1950—1968, Corpus Brux. Hist. Byz., I, II, II 2; E. Honigman, Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Corpus Brux. Hist. Byz. III, Bruxelles, 1935; M. Canard, Histoire de la dynastie des Hamdanides de Jazirah et de Syrie, Paris, 1951.

[3] Liber expugnationis regionum auctore al-Beladsori, Lugd. Bat., 1866, p. 163 (այսուհետև՝ Beladsori).

[4] Նույն տեղում, էջ 159։

Թեև Օմար խալիֆան կողմնակից չէր շարունակելու հարձակումները դեպի Կիլիկիա և Փոքր Ասիայի խորքերը, այսուհանդերձ, ըստ IX դարի պատմիչ Յակուբիի[5], արաբները հարձակումներ կատարեցին ակներևորեն այդ ուղղությամբ։ Այսպես, հիջրի 20 (640—641) թ. Մայսարա իբն Մասրուկ ալ-Աբսիի գլխավորությամբ արաբական զորքերը հարձակվեցին հռոմների երկրի վրա[6]։ Նրանից հետո ևս մի հարձակում կատարեց Հաբիբ իբն Մասլաման, որը շուտ վերադարձավ և Օմար խալիֆան որոշեց լեռնանցքը (Բաղրասը, Ամանոս լեռներում) սահման դարձնել խալիֆայության ու Բյուզանդիայի միջև։

Օմար խալիֆայի օրոք ավելի հաջող էին արաբների հարձակումները Մեծ Հայքի ու Վերին Միջագետքի կողմից։ Խալիֆայության զորքերը 639-ին Իյադ իբն Ղանմի հրամանատարության տակ անցան Եփրատն ու նվաճեցին Վերին Միջագետքի Եդեսիա և այլ քաղաքները։ Նվաճեցին նաև Մեծ Հայքի Աղձնիք նահանգը, ապա գրավեցին Եփրատի ափին գտնվող Սամոսատը, որը կարևոր ռազմական հենակետ կարող էր դառնալ Բյուզանդիայի դեմ պայքարում[7]։

Մոտավորապես այս ժամանակ պետք է պատահած լինի ասորի անանուն պատմիչի[8] հիշած բյուզանդական արշավանքը, որի նպատակն էր հակահարված տալ արաբներին։ Հարձակումը ղեկավարում էին երկու զորավարներ՝ Վալենտինը Կիլիկիայի կողմից, իսկ հայազգի Դավիթը, հավանաբար, Տարոնի կողմից։ Սրանք մտան Վերին Միջագետք, բայց պարտություն կրեցին ու զորքը կոտորվեց։

Շուտով արաբներն անցան հարձակման երեք ուղղությամբ՝ դեպի Եփրատացիք, Մեծ Հայք ու Փոքր Հայք։ Բյուզանդական Եփրատացիք նահանգում Խալիդ իբն ալ-Վալիդ զորավարը նվաճեց Գերմանիկեն (հնադույն անունը Մաբաշ) և քանդեց նրա բերդը[9]։ Հաբիբ իբն Մասլաման գրավեց Հադաթը (արաբ. Հադաս) և նրա զորքը հասավ Հադաթի լեռնանցքը, իսկ Մեծ Հայքում նա նվաճեց Շիմշաթը (Արշամաշատը) և ապա Մելիտինեն (Մալաթիա) Փոքր Հայքի Երրորդ Հայք նահանգում[10]։ Հաբիբը նվաճեց Զապետրան, ապա հյուսիս ուղղվելով պաշարեց Մեծ Հայքի Կամախ ամրոց-ավանը, սակայն չկարողացավ գրավել։

Այդ ժամանակ արաբներն իրենց հայացքը սևեռեցին դեպի Հայաստան, ուր Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին, միացնելով Հայաստանի նախկին պարսկական ու բյուզանդական մասերը, կազմել էր ինքնավար Հայոց իշխանապետությունը։ Բանն այն է, որ դեռևս Վերին Միջագետքը նվաճելուց անմիջապես հետո հենց 640 թ. Իյադ իբն Ղանմը Բաղեշի Զորա պահակ լեռնանցքով ներխուժել էր Հայաստան[11]։ Սակայն ինքը վերադառնալով, նրա զորքի մի

---

5 Yaqubi, Tarikh, II, Beyrouth, 1960, p. 155.

6 Ա. Տեր-Գևոնդյան, Первый этап образования арабской пограничной области (ас-сугур), «Кавказ и Византия», II, Ереван, 1980, стр. 21—27.

7 Beladsori, p. 175.

8 Н. В. Пигулевская, Византия и Иран на рубеже VI и VII вв. М.—Л., 1946, стр. 287.

9 Beladsori, p. 188.

10 Նույն տեղում, էջ 184—185։

11 «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 109—110։ Beladsori, p 186.

մասը շարունակել էր ճանապարհը մինչև Դվին ու գրավել այն, ապա արաբաց զորքը նույն ուղիով հեռացել էր Վերին Միջագետք։

Կազմակերպելու համար պայքարն արաբների դեմ Կոստանդ (641—668) կայսրը ճանաչեց Թեոդորոս Ռշտունուն որպես Հայոց իշխան և սպարապետ[12] և օգնական զորք ուղարկեց Պրոկոպիոս զորավարի գլխավորությամբ։ Թեոդորոսի ու Պրոկոպիոսի հայ-հունական միացյալ զորքերը մտան Վերին Միջագետք, ասպատակեցին ու վերադարձան[13]։ Սա որոշ ժամանակ ապահովեց Հայաստանի անվտանգությունը, սակայն Փոքր Հայքի ու Փոքր Ասիայի կողմերում արաբները շարունակեցին ասպատակությունները։ Հիջրի 22 (642—643) թ. Ասորիքի փոխարքա Մուավիան ամառային արշավանք կատարեց Հոռոմոց երկիրը 10 հազարանոց զորքով[14]։ Հաջողություններ ունենալով Փոքր Ասիայի արևելյան կողմերում՝ արաբները հիջրի 23 (643—644) թ. իրենց ամառային արշավանքը հասցրեցին մինչև հեռավոր Ամորիոն քաղաքը։ Օմար խալիֆայի օրոք կատարված վերջին արշավանքը կարելի է համարել Հաբիբ իբն Մասլամայի ներխուժումը Չորրորդ Հայք 23 (643—644) թ., որի վերաբերյալ պատմագրության մեջ որոշ շփոթություն կա[15]։ Այս արշավանքը թեև կազմակերպվել էր Օմարի վերջին օրերին, սակայն ըստ երևույթին տեղի ունեցավ Օսմանի առաջին տարում։

Օսմանի օրոք (644—656) պայքարը շարունակվեց և հենց առաջին տարում 24 (644—645) թ.[16] Քուֆայից բերված 800 ռազմիկներ, Սալման իբն Ռաբիայի գլխավորությամբ, որոնց միացավ սիրիացի արաբների գունդը, Հաբիբ իբն Մասլամայի հրամանատարությամբ ներխուժեցին Հոռոմների երկիրը, գրավեցին բերդեր ու վերադարձան ավարով։ Հաջորդ տարում, 25 (645—646) թ. Ասորիքի փոխարքա Մուավիան մի նոր արշավանք կատարեց, նախ ասպատակելով Կիլիկիան, որտեղ արաբները քանդեցին Անտիոքից մինչև Տարսոն բոլոր լքված բերդերը և ապա մինչև Ամորիոն ասպատակելուց հետո զորքը վերադարձավ Կիլիկիայի ճանապարհով Անտիոք։ Բանն այն է, որ Մուավիայի օրոք Կիլիկիան ինչ-որ չափով արաբների հսկողության տակ էր և Մուավիան Կիլիկիայի միջով ընթանալիս բնականաբար անցավ Դրունք Կիլիկիո լեռնանցքով (Տավրոս լեռնաշղթայի վրա)։ 647 թ. արաբները մտան Փոքր Ասիա, գրավեցին Կեսարիան և ապա կողոպտեցին Փռիգիան[17]։

Արաբների առաջխաղացումն ստիպեց Բյուզանդիային ու Հայաստանին արաբների հետ լեզու գտնելու ուղիներ որոնել։ 645—649 թթ. Բյուզանդիան բանակցություններ էր վարում արաբների հետ[18]։ Մյուս կողմից արաբները Ատրպատականի վրայով 650-ին ներխուժեցին Արաքսի հովիտը[19]։ Նկատի ունենալով, որ կայսրությունը արդեն տրամադիր չէր համատեղ պայքար մղել

---

12 Սեբեոս, էջ 110։

13 Denys de Tell Mahre, Chronique, Paris, 1895, p. 7.

14 Ibn al-Athir, al-Kamil fi-l-tarikh, al-Qahira, 1356 (1937—1938), III, p. 19.

15 Այս արշավանքն ընդհանրապես շփոթվել է Հաբիբ իբն Մասլամայի 654-ին կատարած մեծ արշավանքի հետ։

16 Tabari, Tarikh, Le Caire , IV, 1963, p. 348.

17 «История Византии», М., 1967, I, стр. 368.

18 Denys de Tell Mahré, p. 8.

19 «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց», Պետերբուրգ, 1887, էջ 11։

և ձգտում էր համաձայնության գալ արաբների հետ, մենակ թողնելով Հայաստանը, Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին 652 թ. նպաստավոր պայմաններով դաշինք կնքեց Ասորիքի փոխարքա Մուավիայի հետ, ըստ որի Հայոց իշխանապետությունը դառնում էր չեզոք երկիր, իսկ եթե հույները հարձակվեին Հայաստանի վրա, խալիֆայությունը խոստանում էր օգնել հայերին[20]։

Հայ-արաբական դաշնագիրը դժգոհություն առաջացրեց բյուզանդական արքունիքում և Կոստանդ կայսրը 653 թ. ներխուժեց Հայաստան, ապա վերադարձավ, զորք թողնելով Մավրիանոս զորավարի հրամանատարությամբ։ Արաբները անմիջապես միջամտեցին և այսպիսով Կիլիկիայի ու Փոքր Հայքի կողմերում մղվող պայքարին զուգահեռ Հայաստանը ևս դարձավ երկու պետությունների ընդհարումների թատերաբեմ։ Սելևկյան տոմարի 964 (652—653) թ. Հաբիբ իբն Մասլաման ասպատակեց Փոքր Հայքը (ըստ ասորի պատմիչի՝ Միջագետքը, այսինքն Միջագետքի սահմանային գոտին), իսկ 33 (653—654) թ. Մուավիան արշավանք կատարեց և Մալաթիայի (որը ժամանակավորապես գրավվել էր հույների կողմից, ապա նորից անցել արաբներին) շրջակայքում գրավեց Հիսն ալ-Մարա բերդը[21]։ Թեոդորոս Ռշտունին ըստ պայմանագրի օգնական զորք խնդրեց Մուավիայից և ստացավ 7 հազար ռազմիկներից բաղկացած մի գունդ, որը հալածեց Մավրիանոսին մինչև Տրապիզոն։ Մուավիան Թեոդորոս Ռշտունուն ճանաչեց Հայաստանի, Վիրքի, Աղվանքի ու Չողա երկրի կառավարիչ[22]։

Սակայն բյուզանդական զորքը դեռ մնում էր Հայաստանում և Մուավիան կամեցավ առիթից օգտվելով խախտել Հայաստանի հետ ունեցած պայմանագիրը և հաստատվել Հայաստանում։ 654 թ. Հաբիբ իբն Մասլաման ներխուժեց Հայաստան և առաջին հերթին հարձակվեց Կարնո քաղաքի վրա (Թեոդոսիուպոլիս), որը գրավեց և այսպիսով Հայաստանն անջատվեց Բյուզանդիայից[23]։ Ապա Հաբիբը նվաճեց Հայաստանն ու Վիրքը, իսկ Մավրիանոսը նրան դիմադրություն չկարողացավ ցուցաբերել։ Մյուս կողմից Սալման իբն Ռաբիան գրավեց մերձկասպյան շրջանները։ Սակայն շուտով Հաբիբը հեռացավ Հայաստանից և երկիրը մնաց անորոշության մեջ, քանի որ նա իր հետ տարել էր Թեոդորոս Ռշտունուն։ Նույն ժամանակ Մուավիան հարձակում կազմակերպեց ծովի վրա և արաբական նավերը գրավեցին Հռոդոս կղզին, իսկ 655-ին Փոքր Ասիայի լիկիական ափերի մոտ տեղի ունեցած ծովամարտում արաբները բնաջնջեցին բյուզանդական նավատորմիղը[24]։

Այսպիսով, Օսման խալիֆայի իշխանության վերջում արաբների ձեռքում էին Մալաթիա, Զապետրա, Հաղաթ և այլ վայրեր։ Արաբները հաստատվել էին նաև Չորրորդ Հայքում (Ծոփք), որի Շիմշաթ (Արշամաշատ) քաղաքը նրանց համար ռազմագիտական նշանակություն ուներ։ Սաղմնային վիճակում ձևավորվում էր «Միջագետքի սահմանային ամրությունների գոտին» (ալ-սուղուր ալ-ջազարիյյա)։

---

20 Սեբեոս, էջ 140—141։

21 Denys de Tell Mahré, p. 8; Ibn al-Athir, III, p. 68.

22 Սեբեոս, էջ 146։

23 Beladsori, p. 197.

24 «История Византии», I, стр. 368.

Սակայն 656 թ. Օսմանի սպանությամբ արմատապես փոխվեց քաղաքական դրությունը։ Նոր խալիֆա Ալիի (656—661) տիրակալության հենց առաջին տարում սկսեցին ներքին երկպառակությունները և խալիֆայությունը ժամանակավորապես թուլացավ[25]։ Կայսրությունն անմիջապես հակահարձակման անցավ և նրա զորքերը նվաճեցին Մալաթիան և շրջակա բերդերը[26]։ Այսպիսով, արաբների ձեռքում դարձյալ մնաց միայն Անտիոքը, որը միշտ էլ համարվել է սահմանային ամրություններ գոտի։ Ասորիքի փոխարքա Մուավիան, որն անմիջապես սկսել էր պայքարը Ալիի դեմ իշխանությունը գրավելու նպատակով, ստիպված եղավ 658 կամ 659 թ. զինադադար կնքել Կոստանդ կայսեր հետ, պարտավորվելով տարեկան հարկ վճարել, իր թիկունքն ապահովելու մտահոգությամբ։ Հայաստանում իշխան դարձավ Համազասպ Մամիկոնյանը, որը կապված էր Բյուզանդիայի հետ[27]։ Սակայն հենց որ Մուավիայի պայքարը հաջողությամբ պսակվեց և նա դարձավ խալիֆա (661—680), անհապաղ վերսկսեց պատերազմը կայսրության դեմ, որը հասավ կատաղի չափերի[28]։ Նա Փոքր Ասիայում իր թիկունքն ապահովեց Հայաստանում ճանաչելով Գրիգոր Մամիկոնյանին որպես Հայոց իշխան ըստ 652 թ. դաշնագրի պայմանների[29]։

Ըստ արաբ պատմիչների վկայությունների Մուավիայի իշխանության (661—680) տասնիններորդ շրջանում արաբներն ամեն տարի արշավում էին Փոքր Ասիա, ընդ որում պատմիչների մոտ հիշվում է ոչ միայն արշավանքի թվականը, այլև զորքի հրամանատարի անունը և հարձակման թիրախ դարձած նահանգը կամ քաղաքը։ Այսպես, հիջրի 41 (661—662) թ. Հայաստանը նվաճող Հաբիբ իբն Մասլամայի գլխավորությամբ կատարվեց առաջին արշավանքը։ 44 (664—665) թ. Աբդ ալ-Ռահման իբն Խալիդ ալ-Վալիդի գլխավորությամբ սարակինոսները ասպատակեցին Կողոնիա նահանգը։ Նույնի հրամանատարության տակ տեղի ունեցավ 45 (665—666) թ. արշավանքը[30]։ Սակայն խալիֆայության նպատակն այս անգամ ոչ թե սոսկ Փոքր Հայքում և Եփրատացիք նահանգում ամուր հաստատվելն էր (ինչպես Օմարի ու Օսմանի օրոք), այլ Մուավիայի ձգտումն էր կայսրության սիրտը խոցել՝ նվաճելով հենց Կոստանդնուպոլիսը։ 669-ին մայրաքաղաքը ցամաքից ու ծովից պաշարվեց։ Արաբական զորքը Ֆուդալա իբն Ուբայդ ալ-Անսարիի գլխավորությամբ անցավ ամբողջ Փոքր Ասիան ու հայտնվեց Բյուզանդիոնի ասիական արվարձանի՝ Քաղկեդոնի առջև։ Նույն թվականին գահաժառանգ Եզիդի գլխավորությամբ արաբական նավատորմիղը ծովի ճանապարհով մոտեցավ Կոստանդնուպոլսին, իսկ 670-ին գրավեց Կիզիկոս կղզին մայրաքաղաքի դիմաց ու մոտեցավ քաղաքին։ Սակայն Կոստանդին IV (668—685) կայսրը ետ մղեց արաբներին[31]։

---

25 Ph. Hitti History of the Arabs, London, 1958, p. 178—186.

26 Beladsori, p. 185.

27 Սեբեոս, էջ 153։

28 «История Византии», I, стр. 371.

29 Ղևոնդ, էջ 14։

30 Yaqubi, II, p. 239—240.

31 Hitti, Նշվ. աշխ., էջ 201—202։

Բանն այն է, որ արաբներն արդեն մեծ վնաս էին հասցրել հույների ծովատիրությանը և նրանց ձեռքում էին Կիպրոս, Հռոդոս, Քիոս և Կրետե կղզիները, ինչպես նաև Կիլիկիայի ու Լիկիայի ափերը։ 674—680 թթ. նույն Եզիդի դլխավորությամբ արաբները ծովի ճանապարհով երկրորդ հարձակումը ձեռնարկեցին Կոստանդնուպոլսի դեմ։ Հույները 678-ին հակահարված տվեցին, իսկ շուտով (680) Մուավիայի մահը արաբներին ստիպեց նահանջել[32]։

Սակայն այս բուռն գրոհները մեծ փոփոխություններ չառաջացրին ապագա սահմանային ամրությունների գոտում։ Նորից նվաճվել էին Մալաթիան, Մարաշը, իսկ Կամախը գրավվեց 59 (678—679) թ.[33]։ Կիլիկիան մնում էր լքված վիճակում։ Արաբներն Անտիոքից, Բաղրասի լեռնանցքով հարձակվում էին Կիլիկիայի բերդերի ու քաղաքների վրա, որոնց բնակչությունը, ինչպես տեսանք, հեռացել էր, սակայն մնացել էին բյուզանդական փոքր կայազորներ։ Այսպես, 53 (672—673) թ. արաբները հասան մինչև Տարսոն ու ժամանակավորապես գրավեցին այն[34]։

Մուավիայի մահվամբ նորից երկպառակություններ ծայր առան խալիֆայության մեջ և Օմայանների հակառակորդները մեծ ապստամբություն բարձրացրին։ Դեռ իր կենդանության օրոք Մուավիան դաշինք էր կնքել Կոստանդին IV-ի հետ՝ պարտավորվելով նույնիսկ հարկ վճարել[35]։ Մուավիայի մահվանից հետո Հայոց իշխանապետությունը լիակատար անկախություն ստացավ Գրիգոր Մամիկոնյանի իշխանության վերջին տարիներին (680—685) և Հայոց իշխան Աշոտ Բագրատունու օրոք (685—689)[36]։ Սակայն Բյուզանդիան նորից իր ազդեցությունը տարածեց արևելքում և Հայոց իշխան դարձավ Ներսեհ Կամսարականը (689—693), որը կապված էր Բյուզանդիայի հետ[37]։ 689-ին կնքված բյուզանդա-արաբական պայմանագրով Կիպրոսն անցել էր Բյուզանդիային։ Հայաստանում Բյուզանդիան նվաճել էր Կամախը, ինչպես նաև Մալաթիան, որը շուտով բյուզանդացիք քանդեցին ու լքեցին և այնտեղ հաստատվեցին հայեր ու արամեացիք (նաբթ, նաբաթացիք)[38]։ Նրանք գրավեցին Մարաշը և այնտեղ հաստատված մահմեդականներին վտարեցին։

Սակայն Աբդ ալ-Մալիք (685—705) խալիֆան կարողացավ ճնշել ներքին ապստամբությունները և կազմակերպել արաբական պետությունը, որի շնորհիվ ամրապնդվեցին նվաճումները տարբեր նահանգներում[39]։ Եթե արաբական սահմանային ամրությունների գոտու կազմավորման առաջին (Օմար և Օսման խալիֆաների օրոք) և երկրորդ (Մուավիայի օրոք) շրջաններում դեռ անորոշ էին արաբական նվաճումներն այս կողմերում, ապա Աբդ ալ-Մալիքի օրոք (երրորդ շրջանում), ինչպես կտեսնենք, նվաճվեցին Մեծ Հայքի արևմտյան որոշ գավառներ (նաև Մեծ Հայքն ամբողջովին), Փոքր Հայքի հարա-

---

32 «Истории Византии», I, стр. 372.

33 Beladsori, p. 184.

34 Yaqubi, p. 239.

35 «История Византии», I, стр. 372.

36 Ղևոնդ, էջ 18—19։

37 «Ստեփաննոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 101։

38 Beladsori, p. 185.

39 Hitti, նշվ. աշխ., էջ 217—219։

վային կեսը, Եփրատացիքն ու Կիլիկիան և կազմավորվեց սահմանային ամրությունների (սուղուր) դոտին որպես մեկ ամբողջություն։

Աբդ ալ-Մալիք խալիֆան, ինչպես տեսանք, իր իշխանության սկզբնական շրջանում, 689-ին, դաշինք էր կնքել Բյուզանդիայի հետ։ Սակայն 692 թ. Հուստինիանոս II կայսրը (685—695, 705—711) խախտեց այն և Սեբաստուպոլսի մոտ (Փոքր Հայք) բյուզանդական զորքերը սաստիկ պարտություն կրեցին[40]։ Պատերազմը շարունակվեց մինչև 701 թ., երբ խալիֆայի եղբայր Մուհամմադ իբն Մարուանը վերջնականապես նվաճեց Հայաստանը հարակից երկրներով (Վիրք, Աղվանք, Շիրվան, Դարբանդ)[41]։ Այս բոլոր մասերից կազմվեց մեկ նահանգ, որը Հայաստանի անվամբ կոչվեց Արմինիա և մնաց խալիֆայության կազմում մինչև 860-ական թթ. (իսկ ձևականորեն նաև ավելի ուշ)։

Այս ընթացքում արաբները նորից ամուր հաստատվել էին Փոքր Հայքի հարավային մասերում՝ գրավելով Մալաթիան, որն ավերակ վիճակում էր։ Հիջրի 76 (695—696) թ. նվաճվել էր Մարջ ալ-Շահմը, որը գտնվում էր Մալաթիայի ու Մամեստիայի միջև։ 183 (702) թ. արաբները նվաճեցին Տարանդան, որով արդեն մոտեցան Անտիտավրոս լեռներին։ Ապա նվաճվեց Կամախը, հավանաբար Կարնո քաղաքը նվաճելու ժամանակ 81 (700—701) թ.[42]։

Եփրատացիք նահանգում Մուհամմադ իբն Մարուանը դեռևս 75 (694—695) թ. հաղթել էր բյուզանդական զորքին ու գրավել Մարաշը։ Ապա Աբդ ալ-Մալիքը զորքեր էր ուղարկել Կիլիկիան գրավելու։ 84 (703) թ. խալիֆայի որդի Աբդալլահը Անտիոքի կողմից Ամանոսի լեռնանցքով մտավ Կիլիկիա ու տիրացավ Մամեստիային, վերակառուցեց նրա բերդը հին բերդի հիմքի վրա և 300 զինվոր (հավանաբար ընտանիքներով) հաստատեց քաղաքում[43], գրավելով նաև մոտակա Սինան ամրոցը։ Մամեստիան (Մասսիսա) դրանից հետո դարձավ արաբների ամենամյա արշավանքների կարևոր կայանը, ուր ձմեռում էին Անտիոքից եկած զորքերը։ Մամեստիայից անմիջապես հետո նվաճվեցին նաև Անազարբան, Տարսոնը, Ադանան և ամբողջ Կիլիկիան մինչև Դրունք Կիլիկիո լեռնանցքը։ Սակայն այդ քաղաքները (Անազարբա, Տարսոն, Ադանա) երկար ժամանակ մնացին կիսավեր վիճակում և Օմայանների օրոք Կիլիկիայում հիմնական ռազմական հենակետը եղել է Մամեստիան։ Դեռևս 705 թ. արդեն Մասլամա իբն Աբդ ալ-Մալիք (խալիֆայի որդի) զորավարը Կիլիկիայից, Դրունք Կիլիկիո լեռնանցքի վրայով, մի շարք հարձակումներ էր կատարել և ժամանակավորապես գրավել Տիանա, Հերակլիա և այլ բյուզանդական քաղաքներ[44]։ Ինչպես երևում է, մյուս քաղաքները վերականգնվեցին ու ամրացվեցին հետագայում (Աբբասյանների օրոք)։

Այսպես, արաբական նորակազմ պետությունը, խլելով արևելահռոմեական կայսրությունից նրա մերձավորարևելյան նահանգների զգալի մասը, կազմակերպեց նոր վարչական միավորներ։

---

40 «История Византии», II, стр. 42.

41 Ղևոնդ, էջ 19—20։

42 Yaqubi, II, p. 281; Tabari, VI, p. 331.

43 Beladsori, p. 165—169.

44 Tabari, VI, p. 202, 439, 492.

Արաբական սահմանային ամրությունների գոտու և բյուզանդական նահանգների սահմանը գծված էր լեռնաշղթաներով։ Կիլիկիայի (Ասորիքի սահմանային ամրությունների) կողմից այդ սահմանը Տավրոսյան բարձրաբերձ լեռնաշղթան էր (բարձունքները հասնում էին 3500 մետրի)[45], որն արաբները ճեղքում էին երկու լեռնանցքներով՝ Դրունք Կիլիկիո (Pylae Ciliciae, արաբ. Դարբ ալ-Սալամա, ապահովության լեռնանցք) և Հադաթի (Դարբ ալ-Հադաս)։ Միջագետքի սահմանային ամրությունների կողմից կար Անտիտավրոս լեռնաշղթան, որի ճյուղավորումներն էին Որոմանդոն և Զիգոն Բասիլիկոն լեռները, որոնց արևելյան ծայրը հասնում էր Եփրատ գետին։ Դրանից հետո սահմանը հենց Եփրատ գետն էր մինչև Կամախից արևելք, որից հետո արդեն խալիֆայության պետական սահմանը հանդիսանում էր Արմինիա նահանգի և Բյուզանդիայի սահմանը[46] (Անահտական, Կապույտ և Պոնտոս լեռներով)։

Միջագետքի սահմանային ամրությունների (ալ-սուղուր ալ-ջազարիյա) գոտում[47] ընդգրկված էին Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգից Դարանաղի և Սուղուր գավառները, Ջորբոյդ Հայքից (Ծոփք)՝ Ծոփք Շահունյաց, Դեգիք, Գավրեք և Անձիտ գավառները[48]։ Դարանաղիում լավ հայտնի էր հայկական Կամախ (արաբ. Քամախ) ամրոցը Եփրատի ափին, որը ռազմագիտական մեծ կարևորություն ուներ և հաճախ ձեռքից ձեռք էր անցնում արաբների ու հույների միջև։ Արաբական աղբյուրներում հաճախ հիշված Անձիտ (արաբ. Հանզիթ) գավառն ուներ Խարբերդ (Հորեբերդ) և Անձիտ բերդերը։ Խարբերդն արաբերեն կոչվում էր Հիսն Զիյադ (Զիյադի բերդ), իսկ հետագայում կոչվել է Խարտբիրտ ասորերեն Քորտբերտ ձևից։ Խարբերդն ունեցել է ամուր բերդ և լայն պարիսպներ։

Միջագետքի սահմանային ամրությունների վարչական կենտրոնը Մալաթիան (Մելիտինե) էր, որը բյուզանդական տիրապետության շրջանում Երրորդ Հայքի մայրաքաղաքն էր։ Ուներ միջնաբերդ, ամրակուռ պարիսպներ և որպես ռազմական հենակետ կարևորագույն ամրոցն էր ամբողջ արաբական սահմանային ամրությունների գոտում (սուղուր) և համարվում էր ամառային արշավանքների մեկնման ելակետ։ Մի քանի անգամ ավերվելուց հետո վերակառուցվել է խալիֆաների կողմից։ Ուներ 4 հազարանոց կայազոր[49]։ Նրա մոտ կար մի հին բերդ Կլավդիա (արաբ. Կալաուզիյա) կոչված, որը Մանսուր խալիֆայի օրոք Մալաթիայի հետ վերանորոգվեց։ Մալաթիայից 3 մղոն հեռավորությամբ Եփրատի վտակ Կուբակիբի (Մելաս, Կավկավա) վրա կար Սեբաստիայի ճանապարհը պահող մի կամուրջ, որը մնայուն պահակախումբ ուներ[50]։ Մալաթիայի պաշտպանության համար մեծ նշանակություն ուներ նրանից 3 օթևան (մարհալա) հեռավորության վրա գտնվող Տարենտեն (արաբ.

---

[45] Т. Микаелян, История киликийского армянского государства, Ереван, 1952, стр. II.

[46] А. Тер-Гевондян, Армения и арабский халифат, Ереван, 1977, *տե՛ս քարտեզը, էջ 168։*

[47] G. Le Strange, The Lands of the Eastern Caliphate, Cambridge, 1930, p. 115—1 6.

[48] А. Тер-Гевондян, Армения и арабский халифат, стр. 153—154.

[49] *Հ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 203։*

[50] Beladsori, p. 187.

Թարանդա) նույն Կուբակիբ գետի վրա, որը բյուզանդական շրջանից մնացած բերդաքաղաք էր (Դալանդա)[51]։

Մալաթիայից հարավ գտնվում էին Զապետրա (Սոզոպետրա, արաբ. Զիբաթրա), Հիսն Մանսուր (Perrhe[52], հայ. Հարսնմսուր), որն ուներ պարիսպ, խրամ ու միջնաբերդ և Պեհեսնի (արաբ. Բիհիսնա, ասոր. Բեթ Հեսնա)[53] անառիկ բերդաքաղաքները։ Սրանց թիկունքը պահպանում էր Սամոսատ (արաբ. Սումայսաթ) ամրացված քաղաքը Եփրատի ափին։ Դեպի արևմուտք Տավրոսյան լեռնաշղթայից հարավ գտնվում էր Մարաշ (այս անունը գալիս է հնագույն դարերից, լատ. Գերմանիկե) քաղաքը, որի կենտրոնում կար բարձր միջնաբերդ։ Նրանից հյուսիս-արևելք գտնվում էր Հադաթ (հուն. Ադաթա, արաբ. Հադաս) ամուր բերդաքաղաքը, որից ոչ հեռու այն լեռնանցքն էր, որով Մարաշից գնում էին Արաբիսոս (Եփեսոս, Տավրոսից հյուսիս)։ Ահա Մալաթիայից Մարաշ ձգվող ամրություններով այս շարքը փակում էր ճանապարհը բյուզանդական հարձակումների դեմ և հատկապես հանդիսանում էր Բյուզանդիայի դեմ գրոհների Հենակետ[54]։

Միջագետքի սահմանային ամրությունների շրջանում բնակվողները հայերն էին, իսկ նախկինում Եփրատացիք կոչված նահանգում (Մարաշ, Հադաթ, Հիսն Մանսուր, Բեհեսնա) կար խառն ազգաբնակչություն (հայ, ասորի և այլն)։ Այս շրջանը Ասորիքի սահմանային ամրություններից (Կիլիկիա) բաժանվում էր Ամանոս (արաբ. Լուքքամ) լեռներով։ Ասորիքի սահմանային ամրություններից ամենահինը արաբական շրջանում Մամեստիան (արաբ. Մասսիսա) էր, որն ինչպես տեսանք նորոգվեց ու ամրացվեց պարիսպներով ու բերդով դեռևս Աբդ ալ-Մալիքի օրոք[55]։ Օմայան շրջանում Կիլիկիայի մնացած քաղաքներում ու բերդերում, որոնք կիսավեր վիճակում էին, կային կայազորներ, իսկ նրանց վերակառուցումը կատարվեց Աբբասյանների օրոք։

Աբբասյան Մանսուր խալիֆայի օրոք (754—775) վերակառուցվեց Ադանան և նրա պարիսպներն ամրացվեցին, ինչպես նաև հատուկ վարձատրությամբ կայազոր նշանակվեց։ Նորոգվեց նաև Սարոս (Սայհուն) գետի վրա Ադանայից ոչ հեռու գտնվող Հուստինիանոսի կառուցած կամուրջը[56]։

Անազարբան ու Տարսոնը վերակառուցվեցին Մահդիի (775—785) օրոք, ամրացվեցին նրանց պարիսպներն ու միջնաբերդերը։ Այս քաղաքներում նշանակվել էին մի քանի հազարանոց կայազորներ, հատկապես խորասանյան գնդերից։ Հարուն ալ-Ռաշիդն առավել ևս ամրացրեց Մամեստիան, Անազարբան և Տարսոնը, ինչպես նաև վերակառուցեց ալ-Քանիսատ ալ-Սաուդա (Սև եկեղեցի) նախկին բյուզանդական բերդը և կառուցեց իր անունը կրող Հարունիյյա ամրոցը։ Այս երկու ամրությունները գտնվում էին Ամանոս լեռների արևմտյան կողմում։ Միսը վերակառուցվել ու ամրացվել է Մուտավաքքիլ

---

51 W. M. Ramsay, The historical Geography of Asia Minor, London, 1890, p. 309.

52 Նույն տեղում, էջ 123։

53 Le Strange, նշվ. աշխ., էջ 123։

54 Նույն տեղում, էջ 127—143։

55 Beladsori, p. 165—169.

56 Le Strange, նշվ. աշխ., էջ 131։

խալիֆայի (842—861) օրոք։ Հայտնի էին նաև Մուսակկաբ, Տալլ Ջուբայր և Ջու-լ-Կիլա բերդերը։

Բուն սահմանային ամրությունների գոտու (երկու մասերով) թիկունքում կային նրանց անմիջականորեն օժանդակող նահանգներ։ Այսպես, Կիլիկիան օգնություն էր ստանում Ասորիքից (Շամ), սակայն հատկապես Կիննասրին ռազմական շրջանից (ջունդ), որի կենտրոնն էր Անտիոքը։ Հարուն ալ-Ռաշիդի օրոք Կիննասրինից անջատվեց Ավասիմ (թիկունք)[57] կոչված վարչական միավորը, որն անմիջականորեն պետք է օժանդակություն հասցներ Կիլիկիայի քաղաքներին ու բերդերին և դարձյալ կենտրոնը Անտիոքն էր։ Սակայն Ավասիմի ու Կիննասրինի սահմանազատումը վերջնական չէր և հաճախ նրանք մեկ կառավարիչ էին ունենում և հարկացուցակներում ներկայացվում որպես մեկ միավոր[58]։

Միջագետքի (Ջազիրա) սահմանային ամրությունների թիկունքն էին Հայաստանը (Արմինիա) և Ջազիրան։ Արաբ պատմիչները հաճախ ամբողջ Արմինիան կոչում էին սահմանային ամրություն (սաղր), քանզի այս կարևոր նահանգը խալիֆայության երկու գլխավոր ախոյանների՝ Բյուզանդիայի ու խազարների դեմ գոտեմարտում հիմնական ամրոցն էր։ Սակայն Հայաստանում կային նաև ավելի որոշակիորեն սահմանային ամրություն համարված շրջաններ։ Այսպես, Կարնո քաղաքը (Կալիկալա) իր շրջակա բերդերով սահմանային ամրություն էր համարվում[59], որն անմիջականորեն դիմագրավում էր բյուզանդական զորքերի գրոհին, եթե Կամախը գրավված լիներ վերջինիս կողմից։ Սահմանային ամրություն էր կոչվում նաև Շիմշաթն իր շրջակա բերդերով և այս շրջանը որոշ ժամանակ սահմանային ամրությունների գոտու նման տասանորդ էր վճարում ծանր հողահարկի փոխարեն[60]։ Ջազիրան նույպես Միջագետքի սահմանային ամրությունների շրջանին օգնություն էր հասցնում, մանավանդ որ ուներ Բաքրի (Դիարբաքրի) սահմանային ամրությունը[61]։

Բուն սահմանային ամրությունների գոտու երկու շրջաններն ունեին զինվորական կառավարիչներ, որոնք միայն ռազմական գործերով էին զբաղվում, իսկ հարկահավաքությունը երկրորդական նշանակություն ուներ, քանի որ այս շրջանները միայն թեթև տասանորդ էին վճարում։ Անվերջ ասպատակությունների ենթարկվող այս գավառներում, բնականաբար, թույլ էին զարգացած երկրագործությունը, արհեստները ու առևտուրը։

Դեպի Փոքր Ասիա արշավանքի մի քանի ճանապարհներ կային, որոնցից երկուսը Իբն Խորդադբեհը հիշում է՝ Տավրոսյան լեռնաշղթայի Դրունք Կիլիկիո կոչված լեռնանցքով անցնող ճանապարհը և Հադաթի լեռնանցքով ընթացողը[62]։ Առաջին ճանապարհի մեկնման կետը Հալեբն էր։ Մատենագիրն այսպես է նկարագրում. «Զիերի կայանները (սիքաք) Հալեբից Ասորիքի սահմանային շրջանը (ալ-սուղուր ալ-Շամիյյա).

---

[57] Beladsori, p. 163.

[58] M. Canard, Awasim, „Enc. de l'islam", nouv. éd., I, p. 783—784.

[59] Qudama ibn Jafar, Bibliotheca Geographorum, Arabicorum, VI, Lugd. Bat. 1889, p. 254—255.

[60] Beladsori, p. 184.

[61] Qudama, p. 254.

[62] Le Strange, Նշվ. աշխ., էջ 133—134։

Հալեբից Կիննասրին յոթ ձիերի կայան է, այնտեղից Անտիոք չորս կայան է, ապա մինչև Աղեքսանդրեկ (Իսքանդարիյյա) չորս կայան[63], ապա Մամեստիա (Մասսիսա) յոթ կայան։ Մամեստիայից Ադանա երեք կայան է, ապա Ադանայից Տարսոն (Թարսուս) հինգ կայան։

Տարսոնից Ուլլայկ տասներկու մղոն է, ապա ալ-Ռահուա և Ջաուզատ տասներկու մղոն, ապա ալ-Ջարդակուբ յոթ մղոն և ապա մինչև Պոտանտոն (Բադանդուն) յոթ մղոն»[64]։

Պոտանտոնը[65] գտնվում էր Տավրոսյան լեռների բարձունքում, նրա հարավային կողմում և ուներ անառիկ ամրոց։ Նրանից հարավ գտնվում էր Հիսն ալ-Սակալիբա (սլավոնների բերդ) ամրոցը[66]։ Այստեղից սկսում է երկարատև լեռնանցքը, որն անցնում է Տավրոսյան լեռնաշղթայի հյուսիսային կողմը, որտեղ արաբներն ունեին կայաններ, ամրոցներ։ Ըստ մատենագրի Պոտանտոնից հետո «մինչև Մուասքար ալ-Մալիք (թագավորի ճամբար) Լուլուայի ջերմուկի մոտ և Սաֆսաֆ տաս մղոն է»[67]։

Այստեղից արդեն սկսում էին արշավանքները և առաջին թիրախը դառնում էին Տիանա (արաբ. Թուանա) և Հերակլիա քաղաքները, ինչպես նաև ավելի հեռվում գտնվող Ամորիոնը, ապա ճանապարհը գնում էր մինչև Կոստանդնուպոլիս[68]։

Բյուզանդիայի դեմ արշավանքների համար երկրորդ գլխավոր մայրուղին սկիզբ էր առնում Ռակկա քաղաքից։ Իբն Խորդադբեհն այսպես է նկարագրում[69]. «Ճանապարհը Ռակկայից Միջագետքի սահմանային ամրությունների շրջանը (ալ-սուղուր ալ-Ջազարիյյա).

Ռակկայից Այն ալ-Ռումիյյա վեց փարսախ է, ապա Տալլ (Տելլ) Աբդա յոթ փարսախ, ապա Սարուջ յոթ փարսախ, ալ-Մուզանիյյա վեց փարսախ, Սամոսատ (Սումայսաթ) յոթ փարսախ, Հիսն Մանսուր վեց փարսախ, Մալաթիա տաս փարսախ, ապա Ջապետրա (Զիբաթրա) հինգ փարսախ, Հադաթ (Հադաս) չորս փարսախ, Մարաշ հինգ փարսախ»։ Այստեղ ռազմական ճանապարհը հասնում էր Հադաթի լեռնանցքը, որն անցնում էր Պիրամոս (Ջայհան) գետի վերին հոսանքով։ Տավրոսյան լեռնաշղթայի հյուսիսային կողմում այդ ճանապարհը դուրս էր գալիս Կոկիսոն և Արաբիսոս, ապա մտնում էր Կապադովկիա[70]։

Բացի այս մայրուղիներից կային նաև տեղական ճանապարհներ, որոնք կապում էին Կիլիկիայի ու Միջագետքի սահմանային գոտու քաղաքներն իրար

---

63 Անտիոքից ընթացող ճանապարհն անցնում էր Ամանոս (բարձունքները հասնում էին 1800—2000 մետրի) լեռները ճեղքող Բաղրաս լեռնանցքով (Անտիոքից 4 փարսախ հեռավորության վրա)։ Իսկ Աղեքսանդրեկից հետո ճանապարհն անցնում էր ևս մի լեռնանցքով, որը ճեղքում էր Ամանոսի մի ճյուղավորումը և կոչվում էր դուռն Ասորվոց (Г. Микаелян, նշվ. աշխ., էջ 13)։

64 Ibn Khurdadhbeh, Bibl. Geogr. Arab., VI, p. 99—100; Le Strange, նշվ. աշխ., էջ 134։

65 Le Strange, նշվ. աշխ., էջ 139։

66 Նույն տեղում։

67 Ibn Khurdadhbeh, p. 100.

68 Նույն տեղում, էջ 100—103; Hitti, նշվ. աշխ., էջ 301, 310, 312։

69 Ibn Khurdadhbeh, p. 97.

70 Г. Микаелян, նշվ. աշխ., էջ 12—13։

հետ և դարձյալ ռազմագիտական նշանակություն ունեին։ X դարի աշխարհագրագետ Իբն Հաուկալը հետևյալ ճանապարհներն է հիշում[71]. Աղեքսանդրեկից Բայաս (նավահանգիստ) մեկ օթևան (մարհալա) է, Բայասից Մամեստիա երկու օթևան, Մամեստիայից Անազարբա մեկ օթևան, Մամեստիայից Ադանա երկու օթևան, Ադանայից Տարսոն մեկ օթևան, Տարսոնից Բայաս երկու փարսախ, Բայասից Հարունիյյա մեկ օրից պակաս, Հարունիյյայից Մարաշ մեկ օթևան։ Մարաշն այն օղակն էր, որ միացնում էր Կիլիկիան Միջագետքի սահմանային գոտուն։ Այսպես, Մարաշից Հադաթ մեկ օրվա ճանապարհ էր։ Մարաշից Մալաթիա երեք մեծ օթևան, Հադաթից Հիսն Մանսուր մեկ օր, Հիսն Մանսուրից Ջապետրա մեկ օր։

Արաբական զորքերը տարեկան երեք արշավանք էին կատարում դեպի Փոքր Ասիա՝ գարնանային, ամառային ու ձմեռային, ինչպես դա նկարագրված է X դարի սկզբի արաբ աշխարհագրագետ Կուդամայի մոտ[72]։ Գարնանային արշավանքը տեղի էր ունենում ձիերը գարնանը արածացնելուց հետո, մայիսի 11-ից մինչև հունիսի 10-ը (30 օր)։ Այս արշավանքի ընթացքում հնարավորության դեպքում նորից էին արածացնում ձիերը և վերադառնում։ Այս արշավանքը երկրորդական նշանակություն ուներ, քանի որ հիմնականը ամառային արշավանքն էր և մասամբ՝ ձմեռայինը, որոնք միշտ հիշվում են արաբ պատմիչների մոտ որպես սաֆիա (ամառային) և շատիա (ձմեռային)։ Վերադառնալով գարնանային արշավանքից, զորքերը 25 օր հանգստանում էին (այսինքն հունիսի մնացած օրերը մինչև հուլիսի հինգը), որպեսզի անասունները կաղդուրվեին։ Ապա հավաքվում էին և ամառային արշավանքի էին դուրս գալիս հուլիսի 11-ին ու մնում թշնամու երկրում 60 օր։ Ամենադժվարն արաբների համար ձմեռային արշավանքն էր։ Հեծյալ ռազմիկներն անհրաժեշտ պարենով ձին բեռնավորելուց հետո գնում էին միայն 20 օրով, փետրվարի վերջին ու մարտի սկզբին։

Արաբական սահմանային ամրությունների գոտու դեմ Բյուզանդիան ևս ուներ ամրացված սահմանային բանակաթեմեր։ Կուդաման վկայում է, որ Ասորիքի սահմանայրն շրջանի (Կիլիկիա) դիմաց գտնվող բյուզանդական բանակաթեմերն էին ցամաքից՝ Կապադովկիան ու Անատոլիկոնը, իսկ ծովի կողմից՝ Սելևկիան։ Միջագետքի սահմանային շրջանի դիմաց գտնվում էին Խարսիանոն և Խաղտիք բանակաթեմերը, Կարնո քաղաքի (Կալիկալա) սահմանային շրջանի դիմաց գտնվում էին Արմենիակների բանակաթեմը և Խաղտիքի մի մասը, ինչպես նաև մասամբ Պափլագոնիան[73]։ Հարկավ, վտանգի դեպքում Փոքր Ասիայի բոլոր բանակաթեմերի զորքերը հավաքվում էին, սակայն վերոհիշյալ բանակաթեմերը Բյուզանդիայի համար նույն դերն էին կատարում, ինչ խալիֆայության համար նրա սահմանային ամրությունների գոտին (իկլիմ ալ-սուղուր)։

Ամենահետաքրքրականը սահմանային գոտու դրամական եկամուտների ու ծախսերի հաշվեկշիռն է, որը գտնում ենք Կուդամայի[74] մոտ։ Ասորիքի

---

[71] Opus Geographicum auctore Ibn Hauqal, Lugd. Bat., 1939, II, p. 171—172.

[72] Q u d a m a, p. 259.

[73] Նույն տեղում, էջ 255։

[74] Կուդամա իբն Ջաֆարը սերում էր արամեացի քրիստոնյա ընտանիքից, սակայն բարձր պաշտոն ստանալուց հետո մահմեդականացել էր։

սահմանային շրջանի (Կիլիկիայի) տարեկան հաշվեկշռի մասին նա գրում է. «Սրա եկամուտը մոտավորապես հարյուր հազար դինար (ոսկեդրամ) է, որն ամբողջովին ծախսվում է նրա բարեկարգման և տարբեր կարիքների, ինչպես՝ դիտարանների, պահակակետերի, լրտեսների, սուրհանդակների և կիրճերի, ծանծաղուտների (անցահոն), բերդերի ու այլ նման բաների վերահսկողության համար։

Վերոհիշյալ վայրերին անհրաժեշտ է կայազոր թե՛ կանոնավոր զորքերից (ջունդ), թե՛ անկանոն (սաալիք), որոնց ինչպես նաև ծովի ու ցամաքի, ամառային ու ձմեռային արշավանքների ծախսերի գումարը տարեկան մոտավորապես երկու հարյուր հազար դինար է, իսկ երբեմն հասնում է երեք հարյուր հազարի»։ Պարզ է, որ զորքին հատկացված գումարը ամբողջովին ստացվում էր պետական գանձարանից (բայտ ալ-մալ)։

Իսկ Միջագետքի սահմանային գոտու շրջանի եկամուտներն ու ծախսերն այսպիսին էին. «Այս ամրությունների (Միջագետքի) և Մալաթիայի հասույթը յոթանասուն հազար դինար է, որից տեղական կարիքների համար ծախսվում է քառասուն հազար դինար, իսկ մնացորդը լինում է երեսուն հազար դինար։ Սակայն կառավարիչների ու անկանոն զորքերի համար կարիք է լինում [պետական գանձարանից] տալ առնվազն հարյուր քսան հազար դինար ևս, որն ավելացվում է վերոհիշյալ մնացորդին, երբեմն նույնիսկ հարյուր յոթանասուն հազար դինար և այսպիսով ընդհանուր գումարը դառնում է [երկրորդ դեպքում] երկու հարյուր հազար դինար, բացի արշավանքների ժամանակ եղած հատուկ ծախսերից, որոնք ժամանակին են տրվում ըստ զորքի թվի»[75]։

Վերջապես Դիարբաքրյան (Սամոսատն իր շրջակայքով) և Կարնո քաղաքի սահմանային շրջանների հաշիվը հետևյալն է. «Այս սահմանային ամրությունների տարեկան հասույթը մեկ միլիոն երեք հարյուր հազար դիրհեմ (արծաթ) է, սակայն բերդերի բարեկարգման, զորքի վարձատրման և այլ նպատակների համար ավելացվում է տարեկան մեկ միլիոն յոթ հարյուր հազար դիրհեմ և այսպիսով ընդհանուր գումարը լինում է երեք միլիոն դիրհեմ»[76]։

Ամենահետաքրքրականն այն է, որ մեզ տվյալներ են հասել նաև Բյուզանդիայի դեմ պայքարող արաբական նավատորմիղի և նրա ծախսերի մասին. «Ասորիքի սահմանային ամրությունների շրջանից, ինչպես նաև Ասորիքից (Շամ) ու Եգիպտոսից արշավի ելնող նավերի թիվը ութսունից հարյուր է։ Երբ արշավանքի որոշումը տրվում է, հայտնվում է Եգիպտոսի ու Ասորիքի տերերին (կառավարիչ), որ գործի լծվեն։ Պատրաստություններ են տեսնում Կիպրոս կղզում և հավաքված նավերի ամբողջությունը կոչվում է նավատորմիղ (ուսթուլ), ինչպես ցամաքում հավաքված զորքը կոչվում է բանակ (մուասքար)։ Ասորիքի ու Եգիպտոսի բոլոր նավերի հրամանատարն է Ասորիքի սահմանային ամրությունների շրջանի տերը (կառավարիչ)։ Եգիպտոսից ու Ասորիքից արշավող նավերի ծախսերի գումարը մոտավորապես հարյուր հազար դինար է»[77]։

Մենք աշխատեցինք նկարագրել արաբական սահմանային ամրությունների գոտու (իկլիմ ալ-սուղուր) ձևավորման փուլերը և նրա վարչական կազմա-

---

[75] Qudama, p. 253—254.

[76] Նույն տեղում, էջ 255։

[77] Նույն տեղում։

կերպությունը, որից հետո կուզենայինք հակիրճ կերպով ուրվագծել ռազմական ընդհարումների այն երկար շարքը, որը տևեց մինչև նրա վերացումը X դարի կեսերին[78]։

Օմայան Վալիդ (705—715) և Սուլայման (715—717) խալիֆաների օրոք արաբների գրոհը Բյուզանդիայի դեմ գրեթե ամենամյա հարձակումներով է՛լ ավելի սաստկացավ և հասավ իր գագաթնակետին 716—717 թթ., երբ արաբական զորքը Վալիդի եղբոր՝ Մասլամա իբն ալ-Մալիքի գլխավորությամբ ցամաքից, իսկ նավատորմիղը՝ ծովից պաշարեցին կայսրության մայրաքաղաքը։ Սակայն նոր կայսր Լևոն III Իսավրացին (717—741) ոչ միայն ետ մղեց արաբներին, այլև ամրապնդեց կայսրության դիրքերը Փոքր Ասիայում։ Մինչև դարի կեսերը սարակինոսները շարունակում էին իրենց պարբերական գրոհները, սակայն այլևս չկարողացան լուրջ տագնապ պատճառել Բյուզանդիային։

Օմայանների անկման և Աբբասյանների՝ իշխանությունը գրավելու օրերին տիրող խառն դրությունից օգտվելով Կոստանդին V Կոպրոնիմոս (741—775) կայսրը 752-ին նվաճեց Մելիտինեն և ապա նրա զորավար հայազգի Գուսանը (Քուսան) գրավեց Կարնո քաղաքը։ Սակայն երկու տարի անց արաբները վերանվաճեցին այդ վայրերը, իսկ Մանսուր (754—775), Մահդի (775—785) և հատկապես Հարուն ալ-Ռաշիդ (786—809) Աբբասյան խալիֆաների օրոք վերսկսվեցին համառ գրոհները դեպի Փոքր Ասիա՝ հասնելով մինչև Ամորիոն և ստիպելով Իրինե (797—802) կայսրուհուն և Նիկեփոր I (802—811) կայսրին տարեկան հարկ վճարել խալիֆայությանը։

Սակայն Լևոն V Հայկազնի օրոք (813—820) կայսրությունն իր դիրքերն ամրապնդեց շնորհիվ այն բանի, որ Հարուն ալ-Ռաշիդի հաջորդների օրոք ծայր էին առել ներքին երկպառակությունները։ Իսկ Թեոփիլոս կայսեր (829—842) տարիներին, երբ Ատրպատականում Բաբեկի ապստամբության հետևանքով խալիֆայության զորքերը զբաղված էին, բյուզանդական զորքերը 837-ին գրավեցին Սամոսատը և ներթափանցելով Հայաստան՝ հասան մինչև Խարբերդ և Բասեն։ Սակայն շուտով Բաբեկի ապստամբությունը ճնշվեց և Մուտասիմ խալիֆան (833—842) 838-ին ներխուժեց Փոքր Ասիա և հասնելով Ամորիոն, կործանեց այն։

850-ական թթ. վերջին, Մուտավաքքիլ (847—861) խալիֆայի օրոք, նորից բորբոքվեց պատերազմը և Միքայել III (842—867) կայսեր և Մանուել Մամիկոնյանի գլխավորությամբ բյուզանդացիք մի քանի հաջող արշավանքներ կատարեցին դեպի Միջագետքի սահմանային ամրությունները՝ մոտենալով Սամոսատին։ Սակայն Մալաթիայի Օմար իբն Աբդալլահ ալ-Ակթա ամիրը, Պավլիկյանների գլխավոր զորահրամանատար Կարբեասի ընկերակցությամբ, 863-ին արշավանքի դուրս եկավ և առաջ խաղաց Փոքր Ասիայում։ Այսուհանդերձ, շուտով Պետրոնաս զորավարի գլխավորությամբ կայսրության զորքերը հաղթանակ տարան և Օմարն ու Կարբեասն սպանվեցին[79]։

Սա արաբների վերջին համարձակ գրոհն էր կայսրության դեմ և նրանց մոտավորապես մեկուկեսդարյա գերազանցությանը, որն ստիպում էր հռոմներին հիմնականում պաշտպանվել, 860-ական թթ. հաջորդեց մեկդարյա մի նոր շրջան, երբ Բյուզանդիան էր հարձակվողը, իսկ աբբասյան խալիֆայու-

---

78 Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ կեսարիո, Դահիրէ, 1937, Բ, էջ 303—317։

79 A. Vasiliev, նշվ. աշխ., I, էջ 249—256։

թյունը և նրանից բաժանված արաբական պետությունները (Թուլունիներ, Համդանիներ և այլն) հիմնականում պաշտպանվում էին։

Այս հարյուրամյա գոտեմարտը պսակվեց Արևելահռոմեական կայսրության լիակատար հաղթանակով և իրար ետևից նվաճվեցին արաբների բոլոր ռազմական հենակետերը։ Այսպես, 934-ին գրավվեց Մալաթիան, 949-ին՝ Կարնո քաղաքը, 961—962-ին՝ Մարաշն ու Անազարբան, իսկ 965-ին՝ Մամեստիան ու Տարսոնը։ Անտիոքի գրավումով 969 թ.[80] լրիվ վերացվեց արաբական սահմանային ամրությունների գոտին (իկլիմ ալ-սուղուր)։

Այսպիսով, Մեծ Հայքի արևմտյան գավառները, Փոքր Հայքը, Եփրատացիքը և Կիլիկիան, որոնց աղգաբնակությունը մեծամասնությամբ կամ մասամբ հայերից էր բաղկացած, երեք հարյուրամյակից ավելի ականատես եղան երկու հզոր ախոյանների արյունահեղ գոտեմարտերին, որը վերջացավ նրանցից մեկի (խալիֆայության) քայքայումով ու կործանումով և որի (նաև այլ աղդակների) շնորհիվ հնարավոր դարձավ Հայոց (Բագրատունյաց) անկախ թագավորության գոյացումը (860-ական թթ.) և ծաղկումը։ Սակայն նույն Բյուզանդիան, որը IX դարի երկրորդ կեսին և X դարի առաջին կեսին անուղղակիորեն նպաստել էր հայկական պետականության ամրապնդմանը, XI դարի առաջին կեսին ուղղակիորեն սպառնաց Հայոց թագավորության գոյությանը, որը ճակատագրական եղավ ոչ միայն Հայաստանի այլև հենց կայսրության համար։

АРАБСКАЯ ЗОНА ПОГРАНИЧНЫХ УКРЕПЛЕНИЙ (Сугур)

Доктор историч. наук А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

(Резюме)

В период трехсотлетней арабо-византийской борьбы (VII—X вв.) в составе Халифата существовала особая административная единица — зона пограничных укреплений (иклим ас-сугур), охватывавшая некоторые западные области Великой Армении, часть Малой Армении и бывшие византийские области Евфратисию и Киликию. Арабы начали ее завоевание и образование при халифах Омаре (634—644) и Османе (644—656), продолжили при Муавин I (661—680) и закончили при Абд ал-Малике (685—705), когда окончательно были образованы две части этой зоны—месопотамские пограничные укрепления (ас-сугур ад-джазариййа) и сирийские (ас-сугур аш-шамиййа), т. е. Киликия. В первой части находились укрепленные города Малатия (Мелитина, административный центр), Хадас, Мараш, Запетра и др., а во второй — Тарс (административный центр), Адана, Мопсуестия, Аназарба и др. Кроме этих двух частей, пограничными укреплениями считались Феодосиополь, или Карно Калак (Каликала), в Армении и Самосата в Диар Бакре (ас-сугур ал-Бакриййа).

---

[80] «История Византии», стр. 210, 213, 214.

Арабские войска проникали из Киликии в византийские фемы через горные проходы «Киликийские ворота» (Pylae Ciliciae, дарб ас-салама) и «дарб ал-Хадас». У географа IX в. Ибн-Хордадбеха описываются две главные дороги походов. Одна дорога шла из Алеппо до Таврского хребта через Киннасрин, Антиохию, Александретту, Мопсуестию, Адану и Тарс, доходила до Подандуса и через «Киликийские ворота» направлялась к крепостям Лулуа и Сафсаф на другой стороне хребта. Вторая дорога походов начиналась от Ракки и через Сарудж, Самосату, Хисн Мансур, Мелитину, Запетру, Хадас и Мараш, затем по горному проходу «дарб ал-Хадас» шла в Каппадокию. Согласно географу начала X в. Кудаме ибн-Джафару, арабы ежегодно совершали три похода — весенний, летний и зимний. Он же приводит расходы месопотамских и сирийских пограничных укреплений, Феодосиополя и Самосаты, а также состав и расходы арабского флота (устул), главнокомандующим которого всегда был правитель сирийских пограничных укреплений.